ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

ՆԵՄԻՇԱԼՅԱՆ ՌՈԶԱ ՎԱՉԻԿԻ

ԱՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Թ.00.01- «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի

աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Էդ. Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

փիլիսոփայական գիտությունների թեկնածու,

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. հուլիսի 4-ին ժամը 14:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք.Երևան, Աբովյան փ., 52ա, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2018թ.հունիսի 04-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ փ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի, սոցիոմշակութային և քաղաքակրթական ակնառու փոխակերպումների, տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն նվաճումների և դրանց հարուցած դրական և բացասական հետևանքների արդյունքում վերջին տասնամյակներում սոցիալ-փիլիսոփայական մտքի առջև ծառացել են հրատապ մի շարք հիմնախնդիրներ, որոնք տեսական լուրջ ուսումնասիրման կարիք ունեն: Մասնավորապես, եթե նախորդ ժամանակաշրջանում սոցիալական կյանքում խորքային փոփոխությունները տեղի էին ունենում արտադրության եղանակի, կրթության մասսայականացման կամ, օրինակ, գիտական հայտնագործությունների և դրանց կիրառման հետևանքով, ապա ժամանակակից սոցիալական փոխակերպումների հիմքում առավելապես ընկած է հաղորդակցության միջոցների ներդրումը, ինչի արդյունքում էապես փոխվել է շփման բովանդակությունը, խտությունը, ժամանակատարածական միջավայրը և այլն, որոնք էլ իրենց հերթին նպաստում են տեղեկատվական նոր մշակույթի ձևավորմանն ու գործառնությանը:

Այս տեսակետից սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է ժամանակակից քաղաքակրթության շրջանակներում ընթացող այն փոխակերպումների իմաստավորման անհրաժեշտությամբ, որոնց ադյունքում ձևավորվել և գործառնում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունը: Ի դեպ, թեև հասարակության այս բնութագրի հետ կապված մասնագիտական գրականության մեջ մեկ ընդհանուր կարծիք չկա և տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բնութագրել այն՝ «տեխնոտրոն» (Զ.Բժեզինսկի), «հետ-արդյունաբերական» (Դ.Բելլ), «հետ-կապիտալիստական» (Պ.Դրակեր), «ցանցային համակարգերի հասարակություն» (Մ.Կաստելս), խոսքն, այնուամենայնիվ, նույն երևույթի մասին է:

Անվիճելի փաստ է, որ տեղեկատվության ստեղծումը, մշակումն ու փոխանցումն իրականացնող տեխնոլոգիաները դարձել են հասարակական զարգացման գերակա ոլորտ՝ ընդարձակելով տնտեսության, կրթության, առողջապահության և սոցիալական կյանքի այլ ոլորտների զարգացման հնարավորություններն ու տեմպերը: Տեխնոլոգիան գիտական գիտելիքների կիրառմամբ ցանկալի արդյունքի հասնելու մեթոդների և գործիքների, պրակտիկ խնդիրների լուծման համար կիրառվող սարքերի ամբողջությունն է, որն, իր հերթին, հանդիսանում է բնական կարգի մեջ արհեստականորեն կարգավորող սկիզբ կամ մեխանիզմ:

Նկատենք նաև, որ տեղեկատվության դերի նման աճը սոցիալական կյանքին հաղորդում է ոչ թե էվոլյուցիոն, այլ թռիչքաձև զարգացման հնարավորություն՝ կրճատելով սոցիալական փոփոխությունների ժամանակն ու տարածությունը: Նոր հնարավորությունները մարդկանց վրա աշխարհայացքային ազդեցություն են թողնում՝ փոխելով կյանքի իմաստի և նպատակի, կարողությունների և ակնկալիքների, արգելքների և ազատության, ավանդույթի և նորարարության վերաբերյալ երբեմնի ըմբռնումներն ու պատկերացումները:

Սակայն տեղեկատվության շրջանառության առումով տարբեր հասարակություններ գտնվում են զարգացման տարբեր մակարդակների վրա, ինչը

պայմանավորված է ինչպես համաշխարհայնացման գործընթացների մեջ տվյալ երկրի ընդգրկվածության աստիճանով ու մշակութային առանձնահատկություններով, այնպես էլ տվյալ հասարակության քաղաքակրթական որակների և տեղեկատվության հետ աշխատելու հմտություններին տիրապետելու հետ: Նշված հանգամանքներն արդեն բավական են փաստելու, որ տեղեկատվական հասարակությունը և դրա հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր հայտնվել են սոցիալական փիլիսոփայության ուշադրության կենտրոնում և դարձել հատուկ ուսումնասիրության առարկա:

Սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում գիտական հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրներ են նաև տեղեկատվական հասարակության ոչ միայն տեխնիկական, այլև՝ սոցիալ-մշակութային պայմանների, այսինքն՝ այսպես կոչված հետարդիականության մշակույթի ձևավորման առանձնահատկությունների վերլուծությունը: Խնդիրն այն է, որ տեղեկատվական հասարակության բնորոշ այս նոր մշակույթն էապես ազդում է մարդկանց մտածողության և աշխարհայացքի ձևավորման վրա, և այդ նույն մշակույթի իմաստավորման համար «բանալի» հասկացություններ են դառնում «բազմակարծություն», «ապակենտրոնացում», «հատվածայնություն», «վիրտուալություն» և այլ բնութագրիչներ, որոնք ևս տեսական հետազոտման և իմաստավորման լուրջ կարիք ունեն: Բավական է նշել, որ վիրտուալ իրականության և հետարդիականության մշակույթի գոյաբանական հիմքերն ունեն որոշակի ընդհանրություն, և երկու դեպքում էլ իրականությունը գործառնում է հիմնականում սիմուլյացիայի (կեղծման, ձևացման) և նշանների միջոցով,[1] որոնք դուրս են գալիս տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառից և ներթափանցում են միջանձնային հարաբերությունների, արվեստի, քաղաքականության, կենցաղի և այլ ոլորտներ:

Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ տեղեկատվական համակարգերի զարգացումը տեղի է ունենում սոցիալական իրականության համատեքստում և էապես փոխում է սոցիոմշակութային հարաբերությունների ողջ ամբողջությունը՝ հարուցելով ինքնության, ռացիոնալության, զարգացման և այլ երևույթների վերարժևորման և արդի պայմաններին համապատասխանեցնելու անհրաժեշտություն: Այս առնչությամբ տեղին է նկատել, որ հետարդիականության մշակույթի և տեղեկատվական հասարակության ձևավորման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ շրջանառվում են մի շարք հայեցակարգեր և մեկնաբանություններ: Մասնավորապես, որոշ հետազոտողներ գտնում են, որ ինչպես հետարդիականության մշակույթը, այնպես էլ տեղեկատվական հասարակությունը, սերում են արդյունաբերական հասարակությունից, որում արդյունաբերությունը հանդես է գալիս որպես տնտեսության գերակա ճյուղ: Բայց, ի տարբերություն արդյունաբերական հասարակության, տեղեկատվական

[1] «Սիմուլյակր» ասելով հասարակական գիտություններում հասկանում են «պատճե, որը չունի բնօրինակ»: Հասկացությունն այս իմաստով զբաղեցնում է հատկապես Ժ.Բոդրիյարի փիլիսոփայության կենտրոնական տեղերից մեկը, և մեկնաբանվում է որպես իրականության կեղծման, ձևացման արդյունք: Այդ մասին առավել մանրամաստ տե՛ս *Бодрийяр Ж.* Симулякры и симуляция. М., Рипол-классик, 2015:

հասարակությունում մարդկանց մեծ մասը ներգրավված է ոչ թե ապրանքի կամ ծառայության արտադրության, այլ տեղեկատվության ստեղծման, պահպանման, մշակման և տարածման ոլորտներում:

Հետազոտության արդիականությունը հիմնավորող կարևոր փաստարկ է նաև այն, որ դեռևս լուրջ ասելիքներ կան «վիրտուալ հասարակության» գործառնական առանձնահատկությունների ուսումնասիրման բնագավառում, որն աստիճանաբար ստեղծում է սեփական գոյաբանական հիմքեր և էականորեն տարբերվում է այսպես կոչված «ֆիզիկական հասարակությունից» ինչպես հանրային գործընթացներում անհատի դերի ու ներառվածության աննախադեպ մեծ չափերով, այնպես էլ նրանց շահերի ու նպատակների առումով: Առավել ևս, որ ժամանակակից մշակույթի հիմքերը և մարդու համար դրանց էկզիստենցիալ նշանակությունն այն հարցերից են, որոնց ուսումնասիրությունը սոցիալական նոր երևույթներ, հարաբերություններ և օրինաչափություններ բացահայտելու հնարավորություն կտա:

Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը

Տեղեկատվության աճով պայմանավորված արմատական փոփոխությունների մասին քաղաքակրթության մեջ առաջին անգամ խոսվել է դեռևս 20-րդ դարի կեսերին: Հենց այդ ժամանակ էլ շրջանառության մեջ դրվեց «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը, որը նախապես ոչ այնքան իրականության բնութագրում էր, որքան՝ կանխատեսում: Հետագա տասնամյակներում, համակարգչային ու թվային տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվության ծավալի աճի հետևանքով ավելացան նաև սոցիալական իրականության ուսումնասիրությունները և աստիճանաբար ձևավորվեցին մարդաբանական, տեխնոլոգիական, մշակութաբանական և այլ հայեցակարգեր:

Տեղեկատվական հասարակության ձևավորման գոյաբանական հիմքերին, սոցիոմշակութային հիմունքներին, ինչպես նաև ցանցային հասարակության վիրտուալ բնույթին առնչվող հետազոտությունները պայմանականորեն կարելի է բաժանել տարբեր ուղղությունների:

Առաջին՝ հիմնախնդրին առնչվող գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղեկատվական հասարակության էությունն ու սոցիոմշակութային գործառույթները բացահայտելու համար անհրաժեշտ է պարզաբանել «տեղեկատվական հասարակության» ձևավորման ու զարգացման էվոլյուցիան, սոցիոմշակութային տարածության կազմավորման հիմունքները և դրանց արդյունքում՝ սոցիալական նույնականացման նոր հիմունքների ձևավորման առանձնահատկությունները (Բաուման Զ., Բել Դ., Բոդրիյար Ժ., Գիդենս Է., Էկո Ու., Էրիկսոն Է., Թոֆլեր Է., Թուրեն Ա., Մ.Կաստելս, Յակովեց Յու., Նազարչուկ Ա. և այլն):

Երկրորդ՝ տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային գործառույթների հետազոտմանն առնչվող տեսական վերլուծություններում առանձնահատուկ տեղ են գրավում սոցիալական կեցության վիրտուալացման և ցանցային հասարակության ձևավորման սոցիալ-փիլիսոփայական հիմհահարցերը (Ադորնո Թ., Բել Դ., Բոդրիյար Ժ., Գվատարի Ֆ., Դելյոզ Ժ., Թոֆլեր Է., Լական Ժ.,

Լիոտար Ժ., Կաստելս Մ., Հարությունյան Էդ., Ղարագուլյան Ա., Միրզոյան Վ., Յարալյան Կ., Սողոմոնյան Գ., Ֆլիեր Ա., Ֆրանկլ Վ., Ֆուկույամա Ֆ. և այլն):

Երրորդ՝ հետազոտողների մեկ այլ խումբ հիմնախնդիրը քննարկում է հասարակության հոգևոր կեցության վիրտուալ բաղադրատարրերի, վարքի ուղղորդման սոցիոմշակութային շարժառիթների, տեղեկատվական բռնության և ցանցային հասարակությունում հարկադրանքի ու համոզմունքի փոխակերպումների համատեքստում (Ազարյան Ա., Բոդրիյար Ժ., Գվատարի Ֆ., Դելյոզ Ժ., Ինոզեմցև Վ., Իվանով Դ., Լական Ժ., Լեբոն Գ., Լոտման Յու., Կանետի Է., Մակլուեն Մ., Մոսկովիչի Ս., Նազարեթյան Ա., Պանարինա Ա., Վան Դեյկ, Ֆրանկլ Վ., Ֆրոմ Է., Ֆուկույամա Ֆ. և այլն):

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանի համառոտ նկարագրությունն իսկ ցույց է տալիս, որ թեև ատենախոսության թեման գտնվում է ժամանակակից փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, մշակութաբանական հարցերով զբաղվող տեսաբանների ուշադրության կենտրոնում, բայց փաստ է նաև, որ ժամանակակից հասարակություններում տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային գործառույթների ուսումնասիրությունը մնում է արդիական, հատկապես եթե հաշվի առնենք, որ այդ տեղաշարժերն ունեն քաղաքակրթական ու մարդաբանական մեծ նշանակություն և, ըստ էության, վերածևում են մարդու և սոցիումի փոխհարաբերությունների ողջ համակարգը՝ չեղարկելով նախորդ ինստիտուտային կառույցները և առաջադրելով նոր տիպի կառույցներ, որոնք փաստորեն ստեղծում են սկզբունքային նոր սոցիալական իրականություն: Ժամանակի ընթացքում տեղեկատվական հասարակության գործառնական առանձնահատկությունները տարածվում են սոցիալական կյանքի այլ ոլորտների վրա ՝ էականորեն փոխելով դրանք, ինչի վառ օրինակներ են կրթության ոլորտում գիտելիքի փոխարեն տեղեկատվության տարածումը, տնտեսությունում ապրանքի վերջնական արժեքի տեղեկատվական բաղադրիչի (գովազդի, հանրային ընկալման, սպառողի կարծիքի) աճը և այլն:

Բացի այդ, ժամանակակից և դրան նախորդող հասարակարգերի միջև ի հայտ են գալիս որոշակի հակասություններ, որոնցից ատենախոսության մեջ վերլուծվում են ինքնության, անհատական և խմբային շահերի, ինչպես նաև անցյալի և ապագայի իմաստավորման ընթացքում առաջացող հակասությունները: Սոցիալական կյանքի արդի իրողությունները պահանջում են բազմակողմանիորեն իմաստավորել մարդկային կեցության բոլոր ոլորտները: Այս խնդրի լուծման հարցում մեծ է հատկապես սոցիոմշակութային մարդաբանության, որպես սոցիալական փիլիսոփայության առանձնահատուկ ուղղության, դերն ու նշանակությունը: Առավել ևս, որ ժամանակակից սոցիալական փիլիսոփայության մեջ նկատվում է սոցիոկենտրոնությունից մարդակենտրոնություն անցման միտում, ինչը արտահայտվում է սոցիալական, քաղաքական և տնտեսական կառուցվածքների անդեմ հարաբերությունների գործառնությունից դիմային հարաբերությունների վերլուծության պահանջարկի ակտիվացմամբ:

Հետազոտության օբյեկտը տեղեկատվական հասարակության և սոցիալական կեցության վիրտուալացման ֆենոմենն է: **Հետազոտության առարկան** տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային գործառույթների և ցանցային հասարակության գործառնական առանձնահատկությունների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն է:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակը ժամանակակից տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային առանձնահատկությունների, սոցիոմշակութային տարածության ձևավորման, վիրտուալ իրականության կառուցարկման և ցանցային համակարգերում տեղեկատվական բռնության մեխանիզմների վերլուծությունն է, ինչը հնարավորություն է տվել նշված հիմնախնդիրների շրջանակներում առանձնացնելու և վերլուծելու տեսական ու գործնական նշանակություն ունեցող երկու կարևոր ենթախնդիրներ.

- տեղեկատվական հասարակության ձևավորման սոցիոմշակութային հիմունքները;
- սոցիալական կեցության վիրտուալացման առանձնահատկությունները ցանցային հասարակությունում:

Նշված ենթախնդիրների ուսումնասիրությունը և դրանց առանձնահատկությունների բացահայտման նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տեղեկատվական հասարակության ձևավորման էվոլյուցիան բնութագրող հայեցակարգերը և առանձնացնել մարդաբանական այն հիմնահարցերը, որոնք ծագում են տեղեկատվական համակարգերի տարածման արդյունքում,
- վերլուծել տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային տարածության ձևավորման առանձնահատկությունները, բնույթն ու բովանդակությունը,
- հետազոտել տեղեկատվական նոր միջավայրի շրջանակներում կյանքի կազմակերպման մշակույթի, ինքնության և ինքնանույնականացման փոխակերպումների սոցիոմաշակութային ու մարդաբանական հետևանքները,
- քննարկել սոցիալական կեցության վիրտուալացման միտումները և բացահայտել հասարակության հոգևոր կեցության վիրտուալ բաղադրատարրերը,
- ուսումնասիրել տեղեկատվական բռնության հիմնախնդիրը և վարքի ուղղորդման սոցիոմշակութային դրսևորումները ցանցային հասարակությունում,
- պարզաբանել հարկադրանքի և համոզմունքի փոխակերպումների առանձնահատկությունները վիրտուալ իրականության համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Ուսումնասիրության համար մեթոդաբանական հիմք են ծառայել համակարգային, կառուցվածքային-ֆունկցիոնալ, պատմահամեմատական, համադրման և վերլուծման մեթոդները, ինչը հնարավորություն է տվել ժամանակակից տեղեկատվական հասարակությունը դիտարկել որպես ամբողջական համակարգ՝

իրեն բնորոշ օրինաչափություններով և զարգացման ներքին տրամաբանությամբ: Կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդի շնորհիվ բացահայտվել են տարբեր գիտակարգերում հիմնահարցի առաջադրման և վերլուծման ընդհանուր և տարբերակիչ գծերը: Պատմահամեմատական մեթոդի օգնությամբ ուսումնասիրվել են «տեղեկատվական հասարակություն» եզրույթի ծագման և զարգացման էվոլյուցիան, իմաստափոխությունն ու բովանդակության ճշգրտումը:

Օգտագործվել են նաև հիմնախնդիրների վերաբերյալ սոցիալ-փիլիսոփայական, սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, մշակութաբանական ու քաղաքագիտական հետազոտությունների տեսական այն եզրակացությունները, որոնք սկզբունքային նշանակություն ունեն տեղեկատվական հասարակության, վիրտուալ իրականության և ցանցային հասարակության գործառնության ու զարգացման օրինաչափությունների ու սոցիոմշակութային հետևանքների առանձնահատկությունները հասկանալու համար:

Հետազոտության գիտական նորույթը

Համակողմանիորեն վերլուծելով տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային գործառույթները, ինչպես նաև վիրտուալ իրականության և ցանցային հասարակության ձևավորման առանձնահատկությունները, առաջարկվել են գիտական նորույթ պարունակող, տեսական ու գործնական կարևորություն ունեցող մի շարք դրույթներ ու եզրակացություններ:

1. Վերլուծելով տեղեկատվական հասարակության ձևավորման ու զարգացման էվոլյուցիան և այն համակարգող հայեցակարգերը՝ առաջադրվել է այն դրույթը, որ արտադրվող և սպառվող «ապրանքների» մեջ տեղեկույթի տեսակարար կշռի գերակայությունը թեև հիմք է տալիս հասարակությունը բնութագրել որպես տեղեկատվական, բայց դա առավելապես աշխատանքային սահմանում է և հանդիսանում է հետարդիականության սոցիոմշակութային մասնակի բնութագրերից մեկը:

2. Տեղեկատվությունը դիտարկելով որպես ժամանակակից հասարակությունների կողմից ստեղծվող հիմնական ապրանքատեսակ, հիմնավորվում է այն դրույթը, որ եթե արդիականության պարագայում առաջարկ-պահանջարկ փոխհարաբերություններում պահանջարկը (սպառում) գերազանցում է առաջարկին (ապրանք), ապա հետարդիականության պարագայում (տեղեկատվական հասարակություն) առաջարկը (տեղեկույթ-ապրանք) պահանջարկից առաջանցիկ է, այսինքն՝ արտադրված տեղեկատվական ապրանքի միայն մի մասն է սպառվում:

3. Հիմնավորվում է այն դրույթը, որ տեղեկատվական արտադրության արդի գործընթացներում թեև զանգվածային տեղեկատվության մեծ մասը ստեղծվում է գլոբալ համակարգերի կողմից, բայց արտադրված այդ «ապրանքի» մեծ մասը սպառվում է փոքր համակարգերի և անհատների մակարդակում: Եվ քանի որ գլոբալ համակարգերի կողմից ստեղծվող տեղեկատվությունը նույնքան գլոբալ սպառում է ենթադրում, այն հիմնականում տարածվում է զանգվածային լրատվական միջոցների

կողմից, որոնք, այսպիսով, փոխում են իրենց «ավանդական» գործառույթն ու նշանակությունը և դառնում են տեղեկատվական գործակալներ:

4. Տեղեկատվություն դիտարկելով որպես հետարդիականության կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակույթ՝ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ վիրտուալ աշխարհի ձևավորմանը զուգահեռ, փոխվում են սոցիալական տարածության և մշակույթի գոյաբանական հիմքերը և աստիճանաբար ձևավորվում է «ֆիզիկական հասարակությունից» էապես տարբերվող մի նոր հասարակություն, ուր առարկայական աշխարհի գոյության չափանիշ է դառնում տեղեկատվական դաշտում դրա ներկայացվածությունը:

5. Արդի քաղաքակրթական և սոցիոմշակութային փոխակերպումները քննարկելով մարդաբանական հիմնահարցերի համատեքստում՝ առաջադրվում և հիմնավորվում է այն դրույթը, որ տեղեկատվական հասարակություններում նույնականացման ավանդական համակարգի ճգնաժամին զուգահեռ ընթանում է նաև փոփոխվող սոցիոմշակութային աշխարհին հարմարվելու և դրանում առավել հարմարավետ «դիրքավորվելու» գործընթաց:

6. Ժամանակակից մարդու սոցիալական կերպարի վերլուծության արդյունքում եզրակացվում է, որ սոցիալականացման արդի գործընթացներում կենսաբանականի և սոցիալականի համադրության փոխարեն առաջին պլան են մղվում անհատականի և սոցիալականի հակասությունները, և սոցիալականացման ժամանակակից միտումները կարելի է դիտարկել որպես անհատականի հարմարեցում սոցիալականին:

7. Անդրադառնալով վիրտուալ իրականության և սպառողական հոգեբանության առնչություններին, եզրակացվում է, որ նյութական պահանջմունքները բավարարող և անհատական բնույթ ունեցող սպառումն աստիճանաբար վերաճում է խորհրդանշային բնույթ ունեցող, հանրային-ցուցադրական սպառողական հոգեբանության, ինչն էլ, իր հերթին, նպաստում է մարդկանց վարքի ուղղորդման ու տեղեկատվական բռնության գործադրմանը:

Պաշտպանության ներկայացված դրույթները

Ուսումնասիրելով տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային առանձնահատկությունները և ընդհանրացնելով հիմնախնդրի վերաբերյալ հետազոտություններում արված եզրահանգումները, պաշտպանության են ներկայացվել հետևյալ տեսական դրույթները.

- Տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային առանձնահատկությունները բնութագրող հայեցակարգերի համեմատական վերլուծության հիման վրա առաջադրվել է այն դրույթը, համաձայն որի նմանատիպ համակարգերում տեղեկությունը կատարում է «հակաէնտրոպիայի» գործառույթ՝ կայունացնում է համակարգը և ստեղծում ավելի բարդ ու բազմակողմանի հարաբերությունների ամբողջություն:
- Հաշվի առնելով սոցիալական կյանքի կառուցարկման գործում տեղեկատվության համակարգաստեղծ գործառույթները՝ ատենախոսը եզրակացնում է, որ տեղեկատվական հասարակությունը ձևավորում է վիրտուալ սոցիալական

տարածություն, որի իմաստային-արժեքային բովանդակությունը չի համընկնում ֆիզիկական սոցիալական տարածության բովանդակության հետ, ինչն էլ հենց հանդիսանում է ավանդական ու ժամանակակից հասարակությունների միջև հիմնական տարբերություններից մեկը:

- Արդի սոցիոմշակութային տարածության բովանդակային վերլուծության հիման վրա առաջադրվում և հիմնավորվում է այն թեզը, որ տեղեկատվական հասարակության փոխհարաբերությունների դաշտի ընդգրկվածությունը հակառակ համեմատական է իմաստային-արժեքային բովանդակությանը՝ որքան ընդգրկուն է տեղեկատվական-հաղորդակցական դաշտը, այնքան ավելի նեղ է դրա իմաստային-արժեքային բովանդակությունը:
- Տեղեկատվական հասարակությունը դիտարկելով որպես ինքնության ու նույնականացման ձևավորման սոցիոմշակութային միջավայր՝ առաջարկվում է այն թեզը, որ ժամանակակից սոցիոմշակութային համակարգերում ստեղծվում են «նույնականության ազատության» գայթակղիչ հնարավորություններ, ինչը դառնում է ինքնության ճգնաժամի լուրջ պատճառ:
- Վիրտուալ իրականությունը դիտարկելով որպես հոգևոր կեցության ձև՝ ատենախոսը եզրակացնում է, որ այն սոցիումի և գործառնող մշակույթի կողմից «պարտադրվող» վարքի նորմատիվ համակարգի հանդեպ մարդու պաշտպանական հակազդման արտահայտման մի ձև է, որը նրան հնարավորություն է տալիս ստեղծել պատրանքային իրականություն և ազատվել սոցիալական իրականության հանդեպ ունեցած պարտականություններից, ինչը ստեղծում է թվացյալ ազատության պատրանքը:
- Վերլուծելով մարդու գիտակցության ձևավորման և վարքի ուղղորդման վրա տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության հնարավորություններն ու հետևանքները՝ ատենախոսը եզրակացնում է, որ ժամանակակից աշխարհում ձևավորվում և գործառնում է կյանքի յուրահատուկ սոցիոմշակութային մոդել, որտեղ մարդկանց «տեղեկատվական կախվածությունը» դառնում է ինչպես կենցաղային, այնպես էլ հոգևոր-աշխարհայացքային բռնություն կիրառելու արդյունավետ գործիք:
- Հիմք ընդունելով նախորդ դրույթները՝ ատենախոսը եզրակացնում է, որ արդի ցանցային հասարակություններում ձևավորվել է բռնության յուրահատուկ մի արտադրություն, որի կազմակերպման իրավասությունը պատկանում է զանգվածային տեղեկատվական միջոցներին:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության մեջ առաջադրված հարցադրումները, արված ընդհանրացումներն ու եզրակացություններն ունեն տեսական և գործնական նշանակություն և կարող են

- օգտագործվել ժամանակակից սոցիալական համակարգերում տեղի ունեցող սոցիոմշակութային փոխակերպումների ուսումնասիրության համար որպես մեթոդաբանական հիմք,
- նպաստել տեղեկատվական հասարակություններում փիլիսոփայական բնույթի հիմնահարցերի առավել ամբողջական հետազոտության իրականացմանը,

- հանդես գալ որպես մեթոդաբանական ուղեցույց ժամանակակից հայ հասարակության զարգացման առանձնահատկությունների և միտումների վերհանման և հետագա զարգացման ընդհանուր օրինաչափությունների և միտումների ձևակերպման համար,
- հարստացնել փիլիսոփայական, սոցիոլոգիական, մշակութաբանական բնույթի հետազոտությունները և ուսումնական ծրագրերը:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության նախնական տարբերակը քննարկվել է ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի 2017թ. մայիսի 19-ի նիստում, իսկ վերջնական տարբերակը՝ 2018թ., փետրվարի 9-ի նիստում, որտեղ ատենախոսությունը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնական դրույթներն ու գաղափարները ներկայացվել են.

- ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության ամբիոնի սեմինարներին (2014-2018թթ.),
- ԵՊԲՀ հասարակագիտական առարկաների ամբիոնի սեմինարներին (2014-2018թթ.),
- ԵՊՀ ՈՒԳ տարեկան նստաշրջանի շրջանակներում՝ նվիրված ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին
- ԵՊԲՀ և Հայկական հոգեբուժական ասոցիացիայի «ՋԼՄ-ները և հոգեկան առողջությունը» գիտաժողովի շրջանակներում (նոյեմբերի 12, 2015թ.),
- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և ՍԻՎԻՏԱՍ ՀՍ «Հասարակագիտական առարկաների դասավանդման խնդիրները բուհ-ում և դպրոցում» հանրապետական գիտաժողովի շրջանակներում (մարտի 25, 2016թ.),
- Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Կենսաբժշկության բարոյա-իրավական հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի շրջանակներում (ապրիլի 26, 2016թ.):

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (4-ական պարագրաֆներով), եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատության ծավալը 140 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտվող թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, ձևակերպվում են հետազոտության նպատակները, խնդիրները և մեթոդաբանական սկզբունքները: Ներկայացվում է ատենախոսության գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ **«Տեղեկատվական հասարակության ձևավորման սոցիոմշակութային հիմունքները»**, բաղկացած է չորս ենթագլուխներից և նվիրված է տեղեկատվական հասարակության հայեցակարգերի ուսումնասիրությանը, տեղեկատվական համակարգերի ներդրման և տարածման հետևանքով հասարակական հարաբերություններում տեղի ունեցող սոցիոմշակութային փոփոխությունների վերլուծությանը:

Առաջին ենթագլուխը՝ «**Տեղեկատվական հասարակության հայեցակարգերի ձևավորման էվոլյուցիան**», նվիրված է սոցիալ-փիլիսոփայական ուսումնասիրություններում տեղեկատվական հասարակության հայեցակարգի ձևավորման յուրահատկություններին: «Տեղեկատվական հասարակություն» եզրույթն այսօր լայնորեն կիրառվում է հասարակագիտության տարբեր ոլորտներում, մինչդեռ դրա պայմանական լինելը հաճախ պարզապես անտեսվում է: Հասկացության բովանդակության վերլուծությունն ակնհայտ վկայում է նրա պայմանական և անորոշ լինելու մասին: Բանն այն է, որ «տեղեկատվական հասարակություն» հայեցակարգի լայն կիրառությունը լուծում է այս պահին անհրաժեշտ աշխատանքային բնույթի որոշ խնդիրներ՝ կապված արագ փոխվող սոցիալական իրականությունը համարժեք կերպով արտացոլելու և հումանիտար գիտելիքի աճող ծավալը դասակարգելու հետ, ոչ թե հանդիսանում է սոցիալական իրականության խոր վերլուծության արդյունք: Չնայած դրան, «տեղեկատվական հասարակություն» եզրույթը մնում է ժամանակակից բազմաթիվ ուսումնասիրությունների կենտրոնում՝ կրելով իմաստային որոշակի ծանրաբեռնվածություն և այդքանով արդարացնելով իր գոյությունը հասարակագիտական և հումանիտար գիտելիքի համակարգում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է արձանագրել, որ տեղեկատվական հասարակությանն առնչվող վերլուծությունները մեթոդաբանական տեսակետից հանգում են երկու իրարամերժ սկզբունքների: Դրանցից առաջինը վերաբերում է նրան, որ տեղեկատվական հասարակությունը հարկ է ընկալել որպես նոր հասարակարգ, որը բնութագրվում է մարդկանց և սոցիալական ինստիտուտների միջև հարաբերությունների բոլորովին նոր տեսակով: Այս տեսակետի ամենահայտնի հետևորդներն են Դ.Բելլը, Ժ.Բոդրիյարը, Մ.Կաստելսը, Մ.Պոստերը և ուրիշներ: Երկրորդ մոտացման կողմնակիցները թեպետ գտնում են, որ որոշակի էվոլյուցիոն կապ կա նախկինում առկա հասարակարգերի և այսօրվա հասարակության միջև, սակայն համոզված են, որ տեղեկատվության աննախադեպ տարածումն իրականում չի հանգեցրել սոցիալական սկզբունքորեն նոր կապերի և հարաբերությունների հաստատմանը: Այս մոտեցման կոմնակիցներն են տեղեկատվական հասարակության տեսաբաններ Է. Գիդդենսը, Յու. Հաբերմասը, Ն. Գարնեմը և ուրիշներ:

Այսպիսով, ժամանակակից սոցիալական փիլիսոփայության մեջ լայն տարածում ունեցող «տեղեկատվական հասարակության» հայեցակարգն իրականում սոցիալական իրականության նկարագրման բավականին հակասական էվրիստիկական մոդել է, որն այս պահին առավելապես հիմնված է տեխնոլոգիական դետերմինիզմի սկզբունքի վրա: Միևնույն ժամանակ, դա բավարար չէ հասարակության մեջ սկզբունքորեն նոր տիպի սոցիալական իրականություն արձանագրելու համար, քանի որ միայն տեխնոլոգիական փոփոխությունները չեն կարող լինել սոցիալական կյանքում արմատական փոփոխությունների ինքնուրույն հիմք, քանի որ դրանց համար անհրաժեշտ դետերմինանտները գտնվում են մշակույթի և արժեհամակարգերի տիրույթում:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը՝ **«Տեղեկատվական համակարգերի զարգացման սոցիոմշակութային հետևանքները»**, ներկայացնում է ժամանակակից տեղեկատվական համակարգերի լայն կիրառության արդյունքում ի հայտ եկող մարդաբանական և սոցիալական փոփոխությունները:

Տեղեկատվական համակարգերի ներդրման և զարգացման արդյունքում սոցիալական հարաբերությունները փոխվում են ոչ թե հատվածաբար, այլ՝ համակարգային ձևով: Այդ փոփոխություններն առնչվում են ոչ միայն սոցիալական հաղորդակցության ձևերին, այլև մտածողությանը, ճանաչողությանը և նույնիսկ ստեղծագործելու ունակությունը: Այս առումով գլխավոր առավելությունը, որ տալիս են տեղեկատվական ժամանակակից համակարգերը, արհեստական ինտելեկտն է, կամ ինտելեկտի նմանակումը: Առհասարակ նմանակումը /իմիտացիան/ սոցիալական կյանքի վրա տեղեկատվական համակարգերի ազդեցության ամենաակնառու դրսևորումներից է, որի արդյունքում սոցիալական-ֆիզիկական իրականությանը զուգահեռ ձևավորում է սոցիալական-վիրտուալ իրականություն, որը մարդու ներգրավվածության տեսակետից պակաս պահանջված չէ, քան առաջինը:

Տեղեկատվական-ինտելեկտուալ համակարգերի զարգացման հերթական դրսևորումը վիրտուալ իրականության տեխնոլոգիաներն են: Դրանք կարևոր են այնքանով, որ բավարարելով տեղեկատվություն սպառելու մարդու պահանջմունքը, միաժամանակ հանդիսանում են սոցիալական հաղորդակցության նոր հարթակ, որը մարդու ինքնարտահայտման և ինքնահաստատման նոր հնարավորություններ է տալիս և գրավիչ է այդ թվում նրանով, որ մարդուն ազատում է ֆիզիկական իրականությամբ պարտադրվող նույնականացումներով առաջնորդվելու անհրաժեշտությունից:

Տեղեկատվական համակարգերի ներդրման սոցիալական հետևանքների համակարգային փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից պայմաններում, օրինակ, զանգվածային լրատվամիջոցներն ուղեկցում են անձի սոցիալականացման ողջ գործընթացը և արդեն դարձել են սոցիալականացման ինստիտուտներից մեկը: Դա տեղի է ունեցել այն բանի հետևանքով, որ զանգվածային լրատվամիջոցներն, այսպես ասած, «սեփականաշնորհել են» սոցիալական իրականությունում տեղի ունեցող գործընթացների մեկնաբանումն ու մատուցումը և տեղեկատվական հասարակության պայմաններում հենց ԶԼՄ-ներն են, լայն իմաստով, իրենց անդրադարձով որոշում, արդյո՞ք տեղի է ունեցել այս կամ այն իրադարձությունը, թե՞ ոչ, և ինչպես է պետք դա հասկանալ:

Առաջին գլխի երրորդ՝ «**Սոցիոմշակութային տարածության ձևավորման առանձնահատկությունները տեղեկատվական հասարակությունում**» ենթագլխի շրջանակներում վերլուծվում են «սոցիալական տարածություն», «սոցիոմշակութային իրականություն» հասկացությունները և տեղեկատվական համակարգերի ազդեցության արդյունքում դրանցում արձանագրվող հիմնական փոփոխությունները:

Դրանցից թերևս ամենախորքային փոփոխությունը կապված է այն իրավիճակի հետ, երբ իրերի նկատմամբ առաջնային դեր ստացող «տեղեկատվական իրականությունը» փոխում է առհասարակ «իրականության» ընկալումը, և ինքն էլ հավակնում է, ֆիզիկական իրերի պես, գոյաբանական կարգավիճակ ունենալուն: Վերջինս արդեն կախված է ոչ թե տեղեկատվությունը կրող օբյեկտի իրական կամ ոչ իրական լինելուց, այլ ընդամենը նրանից, թե ներկայացված է արդյոք օբյեկտը տեղեկատվական դաշտում: *Օբյեկտի գոյության չափանիշ է դառնում դրա ներկայացվածությունը տեղեկատվական դաշտում*:

Տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային տարածությունը դեռ կայացման փուլում գտնվող երևույթ է: Սակայն այս փուլում էլ կարելի է արձանագրել, որ այն էական տարբերություններ ունի ֆիզիկական տարածությունից և ձևավորվելով, զուգահեռաբար ստեղծում է նաև համապատասխան սոցիոմշակութային մարդու տեսակ, որի պարագայում, օրինակ, սոցիալականացումն իրականանում է ոչ թե կենդանի, այլ վիրտուալ հաղորդակցության միջոցով, որն ունի ինքնության ձևավորման մի շարք ձևեր և չունի դրանցից ընտրություն անելու ռացիոնալ չափանիշ, որի կյանքի հոգևոր բովանդակությունը՝ արժեքները, նպատակներն ու իմաստները, կախված են ոչ թե էթնոսի, ազգի կամ հասարակության միասնական անցյալից կամ ցանկալի ապագայից, այլ այդ պահին տեղեկատվական-հաղորդակցական հոսանքներում առավել մեծ տեղ զբաղեցնող տեղեկույթից:

Առաջին գլխի չորրորդ՝ «**Նույնականացման հիմնահարցը տեղեկատվական հասարակությունում**» ենթագլխում վերլուծվում են նույնականացումների համակարգի փոխակերպման առանձնահատկություններն ու հետևանքները: Ավանդական հասարակությունում մենք գործ ունենք ինքնության «տրվածության» հետ, ինչի պայմաններում մարդու ինքնանույնականացումը խնդրահարույց չէր դառնում և չէր ձևակերպվում որպես հիմնահարց: Դա տեղի է ունենում սկսած հետարդիականության ժամանակաշրջանից, որը ցույց տվեց աշխարհի բազմազանությունը, որի նկատմամբ մարդ ստիպված է որոշակիանալ, դրսևորվել հստակ և հասկանալի ձևով: Այդ պահից է ինքնությունը տրվածությունից դառնում հիմնախնդիր: Տեղեկատվական հասարակությունն էլ ավելի է արդիականացնում և բարդացնում ինքնության կայացման գործընթացը, քանի որ ավելի մեծ չափով անորոշություն և փոփոխական չափանիշներ է մտցնում ինքնանույնականացման գործընթացքում: Օրինակ, ժամանակակից ցանցային հարաբերությունները նոր սոցիալական դերեր են ենթադրում, սակայն վիրտուալ իրականություն չի կարող արտամղել, չեզոքացնել կամ փոխարինել իրական ինքնությունը: Ցանցային մշակույթի ձևավորումը, մի կողմից, բարդացնում, իսկ մյուս կողմից՝ հարստացնում է ինքնության ձևավորման գործընթացը, քանի որ ավելի լայն հնարավորություններ և այլընտրանքներ է պարունակում: Մասնագիտական

գրականության մեջ այս կապակցությամբ քննարկվող «ցանցային», «վիրտուալ» կամ «էլեկտրոնային» ինքնություն հասկացություններն ատենախոսության մեջ ներկայացվում են ոչ թե որպես առանձին ինքնություններ կամ դրա տեսակներ, այլ՝ անհատի դրսևորումներ վիրտուալ իրականությունում, և չեն կարող դիտարկվել որպես իրական ինքնության այլընտրանքներ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Սոցիալական կեցության վիրտուալ դրսևորումները ցանցային հասարակությունում»** գլուխը նվիրված է վիրտուալ կամ ցանցային հասարակության կենսագործունեության հոգևոր ոլորտում տեղի ունեցող հիմնական փոփոխություններին և դրանց մարդաբանական և սոցիալական հետևանքներին:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը կրում է **«Հասարակության հոգևոր կեցության վիրտուալ բաղադրատարրերը»** անվանումը:

Աշխարհում և հատկապես տեղեկատվական ծավալուն հոսքերում մարդու ապակողմնորոշվածությունը և դրա հետևանքով առաջացող օտարման միտումներն ակտիվացնում են մշակույթի փոխհատուցման մեխանիզմները: Նորագույն ժամանակներում մարդու էությունն օտարվում է ոչ միայն սոցիալական իրականության, այլև վիրտուալ իրականության մեջ: Վերջինիս նախապատվություն տալը, թեկուզ և ենթագիտակցաբար, հանդիսանում է այն բանի հետևանք, որ արդի մշակույթը տալիս է արժեքների և իմաստների մեծ համակարգ՝ միևնույն ժամանակ չտրամադրելով դրանցում կողմնորոշվելու և դրանցից ընտրություն անելու հստակ չափանիշներ, ինչից ելնելով մարդ ընտրում է հոգեբանական հարմարավետության տեսակետից ավելի նախապատվելի վիրտուալ իրականությունը: Դա, անկասկած, յուրահատուկ փախուստ է ֆիզիկական և սոցիալական իրականությունից, որում, մի կողմից, դրսևորվում է հարմարավետ և անխռով կյանքի նկատմամբ ժամանակակից մարդու ձգտումը, մյուս կողմից՝ մատնանշվում է վիրտուալ իրականության գրավչության, կենսունակության և պահանջվածության գաղտնիքը: Միևնույն ժամանակ, մշակույթի հենց այս՝ մարդու գոյության համրարավետության ապահովման գործառույթի գերակայությունը երկրորդական է դարձնում մշակույթի մյուս՝ ավանդական, արժեքային և այլ գործառույթները, ինչում էլ, թերևս, կայանում է հետմոդեռն իրականությունում, ավանդական իմաստով, մշակույթի ճգնաժամը:

Վիրտուալ իրականության մեջ մարդու կեցությունն աչքի է ընկնում խորհրդանշանային բնույթով: Միևնույն ժամանակ այս խորհրդանիշերը դառնում են սպառման գլխավոր առարկա: Սա նշանակում է, որ սպառումը դադարել է լինել զուտ տնտեսական գործունեություն և տարածվում է նաև սոցիալական և մշակութային ոլորտներում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը՝ «**Վիրտուալ հաղորդակցման սոցիոմշակութային առանձնահատկությունները**», նվիրված է տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով ստեղծվող հարաբերությունների նոր դաշտում առաջացող արժեքային, իմաստային և նորմատիվային այլ բնութագրիչներին, որոնք թույլ են տալիս խոսել նոր տիպի հասարակության նոր սոցիոմշակութային մոդելի առկայության մասին: Որպես տեղեկատվական հասարակության առավել կարևոր գիծ՝ հետազոտողներն

առանձնացնում են դրա «ցանցային» բնույթը, որը փոխարինում է նախկին շերտավորված կառուցվածքը, ուր գերակշռող գործառույթներն ու գործողությունները «գնալով ավելի են կազմակերպվում ցանցերի սկզբունքով»: Դասական մշակույթը կազմավորվել էր «միասնականի», «կեցության», «նախահիմքի» անընդհատ որոնման շուրջ, իսկ հետդասականն ի ցույց է դնում գենետիկ առանցքի՝ որպես խորքային կառույցի, բացակայությունը և սկզբնապես ենթադրում է տարասեռություն, հակաճգումնաբանություն, ժամանակային անորոշություն: Այս ամենի հետևանքով մշակույթի մեջ մտնող բոլոր բաղադրիչների (աշխարհայացք, աշխարհընակլումներ, դիրքորոշումներ) իմաստային ու արժեքային բազմակիության և հավասարեցման սկզբունքը դարձավ առաջատար և տարածվեց նաև արվեստի, գիտության, քաղաքականության, փիլիսոփայության վրա:

Ցանցային հասարակության սոցիոմշակութային ամենատիպական դրսևորումներից մեկը կապված է այն հանգամանքի հետ, որ հարաբերությունների այդ ձևաչափում ժամանակակից մարդը չի ստեղծում սեփական կենսաշխարհը, չի գտնում դեպի սեփական «ես»-ը տանող ճանապարհը: «Կենսաշխարհ» հասկացության բովանդակությունն այն է, որ ժամանակի յուրաքանչյուր տվյալ պահի, յուրաքանչյուր տրված իրավիճակում մարդը հակազդում է ոչ թե պարզապես տվյալ կոնկրետ իրավիճակին և ոչ էլ իրեն շրջապատող միջավայրին, այլ՝ առհասարակ ողջ աշխարհին: Այս առնչությամբ Ժ.Բոդրիյարը նշում է մեր դարաշրջանում մարդու անհետացման վտանգի մասին, որի եղանակը վիրտուալ իրականություն հեռանալն է:

Երկրորդ գլխի երրորդ՝ «**Վարքի ուղղորդման և տեղեկատվական բռնության փոխակերպումներն արդիականության համատեքստում**» ենթագլխում ուսումնասիրության առարկա են հանդիսանում անհատի և խմբերի վարքի ուղղորդման մեխանիզմները, որոնք արդի հասարակություններում նոր դրսևորումներ են ստանում: Բանն այն է, որ ինչքան մեծանում է տեղեկատվության ծավալը, որի հետ առնչվում է մարդն իր առօրյայում, այնքան մեծանում է մարդու գիտակցության ու ենթագիտակցության վրա դրա ազդեցությունը՝ ստեղծելով նաև մարդու մտքերն ու վարքը համապատասխան տեխնոլոգիաների միջոցով ուղղորդելու հնարավորություն: Այս պայմաններում տարածված և պահանջված է դառնում սոցիալական հարաբերություններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, առաջին հերթին հանրային կյանքը կանխատեսելի, իսկ մարդկանց վարքը՝ ուղղորդվող դարձնելու նպատակով: Մասնագիտական գրականության մեջ այդ երևույթը հայտնի է որպես մանիպուլյացիա, որը ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ստանում է զանգվածային ազդեցության լայն հնարավորություններ:

Ժամանակակից հասարակություններում մանիպուլյացիան ընդլայնվել է՝ չսահմանափակվելով միայն քաղաքականության ոլորտով, որտեղ, թերևս, կիրառվել է ի սկզբանե: Մանիպուլյացիայի ամենատարածված հետևանքներն են ինքնության ճգնաժամը, հարաբերապաշտությունը և ոչնչապաշտությունը հոգևոր կյանքում, որն էլ իր հետ բերում է միայնակության և անկարողության անհաղթահարելի զգացում: Վերջինս, սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում ակտիվ մասնակցությունից խուսափելու անհնարինության հետ մեկտեղ, առաջացնում է օտարում ոչ միայն

մարդուն շրջանատող հարաբերություններից, այլ իր «ես»-ից, որի արդյունքում մարդ հեշտությամբ է դառնում կառավարելի և ընդունում մշակված և փորձված տեխնոլոգիաներով նրան փոխանցվող իմաստները, արժեքներն ու նպատակները: Անհատը զարգացող ուղղորդման մեխանիզմների «ճիրաններում» այլևս չի դիտարկվում որպես արժեք, այլ դառնում է սոսկ միջոց, իսկ նրա ազատությունը, անկախությունը և անհատականությունը՝ միայն պատրանքներ են՝ ստեղծված նույն զանգվածային հաղորդակցության և լրատվամիջոցների կողմից:

Ժամանակակից հասարակություններում վարքի ուղղորդման ամենատարածված գաղափարախոսությունը կապված է սպառողական հոգեբանության ձևավորման հետ, այլ կերպ ասած՝ մանիպուլյացիան ուղղված է մարդու հոգևոր մշակույթում հնարավոր բոլոր արժեքներն ու նպատակները սպառման տրամաբանության մեջ իմաստավորելուն և հիմնավորելուն:

Ատենախոսության երկրորդ գլխի չորրորդ՝ «**Հարկադրանքի ու համոզմունքի փոխակերպումները ցանցային հասարակություններում**» ենթագլխում վերլուծվում են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող հաղորդակցության այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են բռնությունը, հարկադրանքը, ներշնչանքը և այլն: Տեղեկատվական հասարակությունն, ըստ էության, մարդուն հաղորդակցվել պարտադրող հասարակությունն է: Ընդ որում, զգալի փոփոխություն է տեղի ունեցել տեղեկատվական համակարգերի զարգացման առումով. եթե նախկինում դրանք միայն տեղեկատվություն տրամադրող էին, ապա ժամանակակից պայմաններում պահանջում են նաև մարդու ակտիվ մասնակցությունը տեղեկատվության փոխանցման գործընթացին: Տեղեկատվական հասարակության մարդը ստիպված է մտնել հաղորդակցության մեջ՝ պատասխանելով նամակներին, հաղորդագրություններին, հայտնելով կարծիք, կիսելով բոլորի հետ իր տպավորությունները և այլն: Այս ամենն ամբողջության մեջ վերցված ստեղծում է սոցիալական հարաբերություններին մասնակցելու պատրանք:

Հաղորդակցվելու պարտադրանքը դրսևորվում է նաև նրանում, որ տեղեկատվական հասարակությունում, փաստորեն, որևէ երևույթի գոյության մասին վկայում է դրա ներկայացվածությունը տեղեկատվական-հաղորդակցական համակարգերում: Սա ստիպում է մարդուն անընդհատ ստեղծել և տարածել տեղեկություն, լինել հաղորդակցության ակտիվ կողմ՝ դրանով փաստելով ուրիշների համար սեփական գոյությունը: Վիրտուալ իրականությունը, որը հավակնում է իրենով փոխարինել սոցիալական հարաբերությունները և դառնալ հարաբերությունների գլխավոր միջավայր, անխուսափելիորեն ենթադրում է ներգրավվածություն տեղեկատվական-հաղորդակցական գործընթացներում, ինչն էլ կարող է դիտվել որպես հարկադրանք առ հաղորդակցություն:

Հիմնավորվում է այն գաղափարը, որ ԶԼՄ-ները տեղեկատվության ներկայացման մեթոդաբանության մեջ անցում են արել տեղեկացնելուց դեպի համոզելը, իսկ համոզելուց՝ դեպի ներշնչելը: Տեղեկատվական հասարակությունում հարկադրանքը, որպես սոցիալական բռնության ձև, էականորեն փոխվում է: Դրա տարածմանը նպաստում է մարդաբանական ճգնաժամը, ավանդական

հասարակարգերի փոխակերպումները, ինչի արդյունքում ասպարեզ են դուրս գալիս ապակառուցողական և հակասոցիալական երևույթներ:

Որքանով տեղեկատվական բռնության տարբեր ձևերի՝ քարոզչության, ապատեղեկատվության, սոցիալական առասպելների որպես փորձով ապացուցված ճշմարտությունների և այլն, տարածման հիմնական թիրախը ամբոխն է, այդքանով այդ գործընթացը նպատակ ունի դիմելու ոչ թե մարդու գիտակցությանն ու բանականությանը, այլ, առաջին հերթին, հույզերին և զգացմունքներին:

«**Եզրակացություն**»-ում ամփոփվում են ատենախոսության հիմնական դրույթները և ընդհանրությունները, որոնց հիման վրա կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- Ժամանակակից զարգացած հասարակություններում տեղեկատվությունը կատարում է համակարգաստեղծ և համակարգապահպան մի շարք գործառույթներ, որոնցից հիմնականը «հակաէնտրոպիայի» գործառույթն է: Շնորհիվ տեղեկատվական ակտիվ հոսքերի սոցիալական համակարգերը դառնում են առավելի դինամիկ, ճկուն, կայուն և բարդ հարաբերությունների ամբողջություն, ինչը նպաստում է համակարգի արդյունավետ գործառնությանն ու զարգացմանը:
- Սոցիալական կյանքի կառուցարկման գործընթացներում տեղեկատվության համակարգաստեղծ գործառույթներից մեկն այն է, որ ձևավորում է վիրտուալ սոցիալական տարածություն, որի իմաստային-արժեքային բովանդակությունը չի համընկնում ֆիզիկական տարածության բովանդակությանը, և դրանով էլ ժամանակակից տեղեկատվական հասարակությունները տարբերվում են նախորդ՝ արդյունաբերական հասարակություններից:
- Ժամանակակից տեղեկատվական հասարակությունները սոցիալական համակարգի զարգացման անհրաժեշտ-օբյեկտիվ գործընթացների արդյունք են և էական փոխակերպումներ են հարուցում հանրային կյանքի գոյաբանական և արժեքաբանական մակարդակներում՝ ստեղծելով սոցիալական կապերի ու հարաբերությունների նոր և ինքնատիպ համակարգեր, որոնք ստեղծում են մարդու այլակերպումների նոր հնարավորություններ ու հեռանկարներ: Մասնավորապես, ձևավորվում է ինքնության և ինքնանույնականացման սոցիոմշակութային նոր միջավայր, «նույնականության ազատության» գայթակղիչ հնարավորություններ, ինչը դառնում է ինքնության ճգնաժամի պատճառ:
- Տեղեկատվական հասարակությունը նպաստում է անհատականի և սոցիալականի փոխհարաբերությունների նոր ձևերի դրսևորմանը: Մասնավորապես, ժամանակակից քաղաքակրթական միջավայրում սոցիալականացման վրա որոշիչ ազդեցություն ունեն ոչ թե «կենսաբանականի և սոցիալականի» հարաբերակցությունն ու հակադրությունը, այլ «անհատականի և սոցիալականի» հարաբերակցության ճշգրտման գործընթացները: Այսինքն՝ սոցիալականացումն ընթանում է ոչ թե կենսաբանականի հաղթահարման, այլ անհատականը սոցիալականին հարմարեցման համատեքստում:

- Տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային բովանդակության բացահայտման համար անհրաժեշտ է հիմնախնդիրը քննարկել արդի մարդաբանական փոխակերպումների համատեքստում: Բանն այն է, որ հասարակության այս նոր տիպը մի կողմից հիմնված է գիտատեխնիկական նվաճումների վրա, մյուս կողմից, սակայն, բնութագրվում է ժամանակակից զանգվածային մշակույթի առանձնահատկություններով: Ժամանակակից զանգվածային մշակույթը վերածվել է սոցիալականացման ինքնատիպ ինստիտուտի, որը նպաստում է արագ փոփոխվող աշխարհի պատկերին հարմարվելու և դրանում հարմարավետ «դիրքավորվելու» գործընթացներին:
- Տեղեկատվական համակարգի հարուցած սոցիոմշակութային թերևս ամենախորքային փոփոխություններից մեկն այն է, որ առարկայական աշխարհի և իրերի նկատմամբ առաջնային դեր ստանձնող «տեղեկատվական իրականությունը» հատուկ գոյաբանական կարգավիճակի հավակնություններ է դրսևորում, ինչի արդյունքում օբյեկտի, առարկայի ու ապրանքի գոյության չափանիշ են դառնում դրանց ներկայացվածությունը տեղեկատվական դաշտում: Այլ կերպ ասած՝ ստեղծվում է սոցիոմշակութային մի նոր իրականություն, որը խարսխված է երևույթների և դրանց միջև կապերի նկարագրության վրա:
- Տեղեկատվական հասարակություններին բնորոշ ինքնության ձևավորման առանձնահատկություններից մեկն այն է, որ այն կրում է վիրտուալ բնույթ: Վիրտուալ իրականությունը ստեղծում է ինքնության և ինքնանույնականացման սոցիոմշակութային այնպիսի միջավայր, ուր էապես ընդլայնվում են «նույնականացման ազատության» հնարավորությունները, և ավանդական հասարակություններին բնորոշ «տրված ինքնության» փոխարեն որոշիչ է դառնում «ընտրված ինքնությունը»:
- Ժամանակակից հասարակությունները կարելի է բնութագրել որպես ցանցային կառույցների հասարակություն, որի բնորոշ գծերից մեկը սոցիալական ձևաբանության գերակայությունն է սոցիալական իրականության նկատմամբ: Սոցիոմշակութային այս նոր իրականության մեջ կարևորվում են ոչ թե սպառման համար արտադրված ապրանքները, այլ դրանց խորհրդանշանային արժեքները: Այլ կերպ ասած՝ նյութական պահանջմունքներ բավարարող և անհատական բնույթ ունեցող սպառումն աստիճանաբար վերաճում է խորհրդանշանային բնույթ ունեցող հանրային-ցուցադրական սպառման, ինչն էլ, իր հերթին, ընդլայնում է մարդկանց վարքի ուղղորդման և տեղեկատվական բռնության գործադրման հնարավորությունները:
- Մարդկանց վարքի և գիտակցության ձևավորման վրա տեղեկատվական հոսքերի ազդեցության ընդլայնման հետևանքով ժամանակակից աշխարհում ձևավորվում և գործառնում է կյանքի կազմակերպման ու կանոնակարգման յուրատեսակ սոցիոմշակութային մի մոդել, որտեղ «տեղեկատվական կախվածությունը» դառնում է ինչպես կենցաղային, այնպես էլ հոգևոր-աշխարհայացքային բռնության գործադրման, վարքի ու համոզմունքների ուղղորդման նախապայման:

Ատենախոսության հիմնական դրույթները և եզրակացություններն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում:

- Նեմիշալյան Ռ. Վ., «Տեղեկատվական մանիպուլյացիայի սոցիոմշակութային առանձնահատկությունները», Երևանի Պետական Համալսարան, Բանբեր N 3 (18) Երևան 2015, էջ 31-41:
- Немишалян Р.В. Воденко К.В., "Потребности человека информационной эпохи" Материалы Всероссийской конференции студентов, аспирантов и молодых ученых. Часть 1. Южный федеральный университет.. г. Ростов-на-Дону, 6-9 апреля 2015 г, с.45-50.
- Նեմիշալյան Ռ. Վ., Կ. Վ. Վոդենկո «Վիրտուալությունը հասարակական կեցության եղանակ և զարգացման հերթական փուլ», Գիտական հոդվածների ժողովածու,Եվրոպական ակադեմիա Երևան 2015, էջ 455-469:
- Նեմիշալյան Ռ. Վ., «Բազմալեզու կրթության արժեքաբանական կողմը»: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան 1(38), Երևան 2016, էջ 63-72:
- Նեմիշալյան Ռ. Վ., «Մասնագիտական նույնականությունը տեղեկատվական դարաշրջանում», Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հասարակագիտություն առարկաների դասավանդման խնդիրները ԲՈՒՀ-ում և դպրոցում, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2016, մարտի 25, էջ 216-226:
- Немишалян Р.В., "Права и обязанности врача и пациента". Материалы Международной конференции, РАУ, Ереван 2017, с. 64-71.
- Նեմիշալյան Ռ. Վ., «Նույնականացման հիմնահարցը տեղեկատվական հասարակությունում», Երևանի Պետական Համալսարան, Բանբեր N 2 (23) Երևան 2017, էջ 53-66:
- Նեմիշալյան Ռ. Վ., «Տեղեկատվական տեխնոլոգիաների մանիպուլյացիոն ազդեցությունը մարդու ինքնության ճգնաժամի և հասարակության հոգեկան առողջության վրա», Հայկական հոգեբուժական ասոցիացիա, Հոգեկան առողջության հայկական հանդես 8(1) 2017, էջ 52-60:

Немишалян Роза Вачиковна

“СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЕ ФУНКЦИИ СОВРЕМЕННОГО ИНФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА”

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук
по специальности 09.00.04 «Социальная философия, этика».
Защита состоится 04 июля 2018 года в 14:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в ЕГУ, по адресу: 0025, г.Ереван, улица Х.Абовяна 52а, Ереванский государственный университет.

Резюме

В диссертации исследуется ряд проблем, связанных с производством и потреблением информации в современном обществе, с влиянием информационных систем на социальную и культурную реальность с вытекающими из этого изменениями в сознании личности и жизни общества. Бурное научнотехническое развитие последний десятилетий сделало доступным использование технических средств для распространения и потребления информации, что, в свою очередь, сделало информацию жизненно важным ресурсом и повысило ее ценность во всех сферах общественной жизни. Одновременно системы, созданные для хранения, обработки, передачи и приема информации, не используются только в одной сфере общественной жизни (например, науке или экономике) и начинают активно применяться во всех отраслях жизнедеятельности человека, одновременно меняя их и подчиняя своей логике. Одним из наиболее очевидных последствий массовой доступности информации являются изменения в традиционном сознании и системе отношений традиционного общества, основу которого составляет в том числе и отсутствие альтерантивных способов огранизации жизни как следствие однобокой трактовки истории, культуры, традиций, ценностей и целей жизни представителей данного общества.

Несмотря на то, что формирование информационного общества является результатом научно-технического развития и глобализации, новый тип огранизации общественных отношений порождает проблемы, связанные с формированием идентичности, поведением, безопасностью и т.д., решение которых в свою очередь зависит от еще большего обьема доступной информации. Еще одной особенностью информационного общества является формирование систем, выпускающих в массовый оборот наибольшее количество информации, что делает их агентами массового информационного влияния. Если учитывать тот факт, что социализация личности в информационном обществе происходит во многом благодаря массовой информации, то можно заключить, что информационные системы получают возможность влияния на

формирование личности и идентичности, систему ценностей, нравственных представлений и моделей поведения не только отдельного человека, но также групп и общества в целом. Таким образом, информационные системы формируют новое социально-культурное пространство бытия современного человека и определяют развитие массовой культуры.

Одновременно для большего распространения необходимо, чтобы информация была как можно более неопределенной и поверхностной. Благодаря этому в современных обществах распространены политические, национальные, религиозные и иные мифы, которые являются формами коллективного сознания и имеют не естественное, как мифолофия, а искусственное происхождение. Следствиями информационного влияния на сознание масс являются снижение уровня аналитического и критического мышления в обществе, вера в правдивость публичной информации и ощущение безысходности и беспомощности.

Информационное общество создает новое социальное пространство, ценностно-смысловое содержание которого не совпадает с содержанием физического пространства данного общества. Эта закономерность является одной из основных причин противоречий традиционных и информационных обществ. Одновременно, еще одной закономерностью современных обществ является то, что распространенность информации в обществе обратно пропорциональна ценносто-смысловой нагрузке информации, то есть чем большее распространение имеет данная информация, тем меньше ее ценностно-смысловое содержание.

Информационное общество меняет всю систему социально-культурной жизни вплоть до ее онтологических основ, что приводит к ситуации, когда физическое существование вещи заменяется ее описанием, то есть мы имеем дело не с физиеким существованием вещи или явления, а лишь с информацией о ней, что, однако, достаточно для того, чтобы вещь или явление в сознании человека информационной эпохи получило онтологический статус. Именно поэтому бытие человека в информационном обществе носит символический характер, а в потреблении большое место занимает символическое потребление. Данные явления могут быть охарактеризованы также как результат информационного насилия и манипуляции, которые являются распространенными в информационном обществе явлениями и несут в себе угрозу обесчеловечивания социальных связей и отношений, заменой их симуляциями. Одной из такий симуляций, по сути, становится и человек со своей копией в виртуальной реальности, который в информационном обществе отчуждается уже не только в социальную реальность, но в большей степени в виртуальный мир.

Nemishalyan Roza Vachik

"THE SOCIAL-CULTURAL FUNCTIONS OF MODERN INFORMATION SOCIETY"

Thesis for Receiving Academic Degree of Candidate of Philosophycal Sciences
Area of specialization: "Social Philosophy, Ethics"
The dissertation defense will be held on 04 July 2018, at 15.00 at Yerevan State University at the committee meeting of Philosophy and Sociology with the speciality of HCC 013, Address: 0025, 52a Abovyan str., YSU, Yerevan

Resume

In the thesis, a number of problems related to the production and consumption of information in modern society, with the influence of information systems on social and cultural reality, with consequent changes in the consciousness of the individual and the life of society are investigated. The rapid scientific and technological development of the last decades made it possible to use the technical means to disseminate and consume information, which made information a vital resource and increased its value in all spheres of public life. At the same time, systems created for storing, processing, transmitting and receiving information are used not only in one sphere of public life (for example, science or economics) but are actively used in all spheres of human activity, simultaneously changing them. One of the most obvious consequences of the mass availability of information are the changes in the traditional consciousness and the system of relations of traditional society, the basis of which is, among other things, the lack of alternative ways of life as a consequence of a one-sided interpretation of history, culture, traditions, values and goals of life of representatives of this society.

Despite the fact that the formation of the information society is the result of scientific and technological development and globalization, a new type of public relations creates problems related to the formation of identity, behavior, security, etc., the decision of which in turn depends on an even larger volume of available information. Another feature of the information society is the formation of systems that produce the largest amount of information on mass circulation, which makes them agents of mass information influence. In fact, the socialization of the individual in the information society is largely due to mass information, so it can be concluded that information systems have the opportunity to

influence the formation of the personality and identity, the value system, moral representations and behavioral models of not only the individual, but also groups and society as a whole. Thus, information systems form a new social-cultural space for the existence of modern man and determine the development of mass culture.

At the same time, for greater distribution, it is necessary that the information be as vague and shallow as possible. Due to this, political, national, religious and other myths are spread in modern societies, which are forms of collective consciousness and have an artificial origin, not natural, as mytholophy. Consequences of information influence on the consciousness of the masses are the reduction of the level of analytical and critical thinking in society, the belief in the truthfulness of public information and a sense of despair and helplessness.

The information society creates a new social space, the value-meaning content of which does not coincide with the content of the physical space of a given society. This pattern is one of the main causes of the contradictions between traditional and information societies. At the same time, another regularity of modern societies is that the prevalence of information in society is inversely proportional to the value-semantic load of information, that is, the more widespread the information is, the less its value-semantic content.

The information society changes the entire system of social-cultural life right up to its ontological foundations, which leads to a situation where the physical existence of a thing is replaced by its description, that is, we are not dealing with the physical existence of a thing or phenomenon, but only with information about it. However, it is sufficient for a thing or phenomenon in the consciousness of a person of the information age to obtain an ontological status. That is why the existence of a person in the information society has a symbolic character, and in consumption a large place is occupied by symbolic consumption. These phenomena can also be characterized as the result of information violence and manipulation, which are common phenomena in the information society and carry the threat of dehumanization of social relations, and replacement them with simulations. One of such simulations, in fact, is a person with his copy in virtual reality, who in the information society is alienated not only to social reality, but more to the virtual world.